

**ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Մելս Հարությունյանի աշխատանքային այցը
Ռուսաստանի Դաշնություն**

29.09.2014

Ռուսաստանի դաշնության սոցիալական և արդյունաբերական սննդի ծառայությունների ինստիտուտի հրավերով սեպտեմբերի 23-27-ը աշխատանքային այցով ՌԴ Մոսկվա քաղաքի և Տամբովի մարզում էր մարզպետի տեղակալ Մելս Հարությունյանը:

Այցելության հիմնական նպատակը մասնակցությունն էր Տամբով քաղաքում կազմակերպված դպրոցականների առողջ ապրելակերպի և առողջ սննդի կազմակերպման հարցերով միջազգային համաժողովին: Միջազգային պատվիրակությանը ընդունեցին ՌԴ Ֆինանսների նախարարի տեղակալը և Տամբովի մարզի նահանգապետը:

Դպրոցական կայուն և անվտանգ սննդի կազմակերպման ուղղությամբ Ռուսաստանի Դաշնությունն ունի հարուստ փորձ:

Միջազգային պատվիրակության մասնակիցները դպրոցական սննդի կազմակերպման դրվածքը ուսումնասիրելու նպատակով եղան Մոսկվա քաղաքի և Տամբովի մարզի մի շարք հանրակրթական դպրոցներում: Մասնագիտական ուսումնական հաստատություններում, որտեղ արտադրվում և դպրոցներին է տրամադրվում պատրաստի դպրոցական սնունդ, ինչպես նաև այդ ուղղությամբ կազմակերպված ցուցահանդեսներում:

Եռօրյա այցը շատ գործնական էր և խիստ՝ կարևոր մեր մարզում դպրոցական սննդի կազմակերպման գործընթացը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար: